ԱՂԱՏ ԲՈՂՈՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԸ

(Միջազգային գիտաժողով, Երևան, 15-18 սեպտեմբերի 1998 թ.)

Հայոց մշակույթը համաշխարհային քաղաքակրթության անկապտելի մասն է կազմում: Հայաստանը գրեթե բոլոր պատմական դարաշրջաններում կապեր է ունեցել աշխարհի քաղաքակիրթ պետությունների հետ, մասնակիցն է եղել բազմաթիվ առաջադեմ փոփոխությունների: Ալեքսանդր Մակեդոնացու ռազմարշավներից անմիջապես հետո Հայաստանն ընդգրկվել է հելլենիստական քաղաքակրթության ոլորտը՝ պահպանելով ազգային մշակույթի հիմնական առանձնահատկությունները: Պարսկաստանի և Հռոմի երկարատև պատերազմների ընթացքում կարողացել է մեծ ճիգերի գնով հաստատել ազգային ինքնությունը: Հայաստանը նաև առաջին երկրներից մեկն է, որն ընտրություն կատարեց հեթանոսության և նոր բարձրացող կրոնի՝ քրիստոնեության միջև և արդեն Դ դարի սկզբին այն հայտարարեց պետական կրոն: Այս իրադարձությունից հետո Հայաստանի պատմությունը սերտորեն կապված է քրիստոնեական քաղաքակրթության և քրիստոնյա աշխարհի հետ: Քրիստոնեություն ընդունելով, Հայաստանը մի կողմից առավել սերտ հարաբերություններ հաստատեց քրիստոնյա աշխարհի հետ, իսկ մյուս կողմից, հակադրվելով թշնամական ուժերին, օգտագործեց այդ գաղափարախոսությունը բարձր պահելու համար ազգային ինքնագիտակցությունը: Քրիստոնեության ընդունման արգասիք էր Հայոց այբուբենի և մատենագրության ստեղծումը, ճարտարապետության, երաժշտության և կերպարվեստի ազգային դպրոցի կայացումը: Գործունեության բնագավառներ, որոնց համեմատական ուսումնասիրությունը, տարածաշրջանի ժողովուրդների ստեղծած մշակութային արժեքների միջավայրում, մնում է հայագիտության կարևորագույն խնդիրներից մեկը: Այս բնագավառների ուսումնասիրությունն էր իր առջև դրել հրավիրված գիտաժողովը, որն իր ընդգրկումով առաջինն էր Հայաստանում մինչ այդ տեղի ունեցած հասարակագիտական, միջնադարագիտական հավաքների մեջ:

1998 թ. սեպտեմբերի 15-18-ը ՀՀ ԳԱԱ դահլիճներում «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» խորագրի ներքո տեղի ունեցավ միջազգային գիտաժողով, որի աշխատանքներին մասնակցում էին Հայաստանի և աշխարհի մի շարք երկրների գիտնականներ: Գիտաժողովի թեմատիկայի ընտրության և անցկացման գաղափարն ու իրականացումը պատկանում է

ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, երջանկահիշատակ Գագիկ Խորենի Սարգսյանին, որը մի խումբ համախոհների հետ միասին կարողացավ Հայաստանի համար այսքան դժվարին պայմաններում հաղթահարել բազմաթիվ դժվարություններ և ըստ պատշաճի նախապատրաստել գիտության այս նոր շքերթը: Գիտաժողովի կազմակերպիչներն էին ՀՀ ԳԱԱ-ն, Հայաստանի ԾՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգային հանձնաժողովը, Մատենադարանը, Երևանի պետական համալսարանը, որոնց շահագրգիռ ներկայացուցիչներից էլ կազմվել էր գիտաժողովի կազմկոմիտեն՝ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Տ. Սարգսյանի գլխավորությամբ: Ծախսերի առյուծի բաժինն իր վրա էր վերցրել Հայաստանի կառավարությունը («Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի» հանձնաժողով), հրատարակությունների բեռը՝ ԾՈՒՆԵՍԿՕ-ի հանձնաժողովը:

Հյուրեր էին ժամանել ԱՄՆ-ից, Անգլիայից, Բելգիայից, Գերմանիայից, Իտալիայից, Ճապոնիայից, Շվեյցարիայից, Ռուսաստանից, Վրաստանից և Ֆրանսիայից: Գիտաժողովի աշխատանքային լեզուներն էին հայերենը, անգլերենը, ռուսերենը և ֆրանսերենը: Ծանրաբեռնված էին գիտաժողովի և՛ գիտական, և՛ ճանաչողական ծրագրերը: Մասնակիցներն այցելեցին մեր մշակույթի մի շարք հուշարձաններ (Էջմիածին, Խոր Վիրապ, Օշական և այլ վայրեր) ու թանգարաններ, ներկա եղան համերգների: Գիտաժողովի մասնակիցներին ընդունեց և նրանց հուզող խնդիրների շուրջ ջերմ զրույց ծավալեց Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Բազմազան էր ու բովանդակալից գիտության այդ մեծ տոնի թեմատիկան, որն իր մեջ ներառում էր ողջ միջնադարի մեր պատմությունն ու մշակույթը Քրիստոնյա Արևելքի համակեցության մեջ: Կազմակերպիչների նպատակն էր վեր հանել Հայոց պատմության, մշակույթի և մատենագրության առանձնահատուկ դերը Քրիստոնյա Արևելքի քաղաքակրթությունների համակարգում: Գիտաժողովի ընթացքում տեղի ունեցան երկու լիագումար, երեք մասնաճյուղերի (յուրաքանչյուրում՝ երեքական) և կլոր սեղանի շուրջ հավաքված նիստեր, որոնք ղեկավարում էին բնագավառի նշանավոր մասնագետները: Ընթերցվեցին շուրջ 70 զեկուցում, որոնցից 60-ի հիմնական դրույթները հրապարակվել էին թեզերի տեսքով:

Բացման, բարեմաղթության և ողջույնի խոսքով մասնակիցներին դիմեցին ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Տ. Սարգսյանը, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀՀ վարչապետ Ա. Ռ. Դարբինյանը, որոնք իրենց խոսքում արժևորեցին գիտաժողովի նշանակությունը Հայաստանի գիտական, հոգևոր-եկեղեցական և քաղաքական կյանքում: Շեշտելով գիտաժողովի կարևորությունը և շոշափած հարցերի այժմեականությունը, ատենախոսները հույս հայտնեցին, որ արթնացած գիտական եռանդը

թույլ կտա հաջորդ տարիներին ևս, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի կապակցությամբ, գիտաժողովներ հրավիրել Երևանում և աշխարհի մյուս հայագիտական կենտրոններում:

Գիտաժողովում ընթերցված զեկուցումները խմբված էին մի շարք գլխավոր թեմաների շուրջ. ա) Եկեղեցի և պետություն, միջեկեղեցական-միջպետական հարաբերություններ, բ) Մատենագրության պատմություն, աղբյուրագիտություն, գ) Ճարտարապետություն և արվեստ: Նիստերի ժամանակ և դրանց ընդմիջումներին տեղի ունեցան բովանդակալից քննարկումներ ու վերարծարծումներ, որոնք հավանաբար կնպաստեն ապագայում Հայաստանի և Քրիստոնյա Արևելքի պատմության և մշակույթի հետազոտական խնդիրների ավելի խոր ուսումնասիրությանը, դուռ բաց կանեն նոր ուսումնասիրությունների հրապարակման համար:

«Քրիստոնյա Արևելք» տերմինը գիտաժողովում մեկնաբանվում էր լայն գիտական առումով: Զեկուցողները այդ եզրի մեջ էին ներառում Բյուզանդական կայսրությունը, Արևելքում իրենց գործունեությունը ծավալած բոլոր քույր Եկեղեցիների ու քրիստոնյա ժողովուրդների պատմությունն ու մշակույթը: Գաղտնիք չէ, որ Հայաստանը Դ դարի սկզբին քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով, պատմական, մատենագրական և մշակութային սերտ կապեր է ունեցել աշխարհի գրեթե բոլոր քրիստոնյա ժողովուրդների հետ: Այդ փոխհարաբերությունների ուսումնասիրությունն արդեն երեք հարյուրամյակ զբաղեցնում է աշխարհի բազմաթիվ հետազոտողների, համալսարանական և գիտական կենտրոնների: Գիտաժողովում ուսումնասիրության նյութ դարձած խնդիրների համար ժամանակագրական սահման էր ընտրվել միջնադարը, որը կարևոր ճանաչողական նշանակություն ունի Հայաստանի ներկա և ապագա մշակութային առնչություններն ու պատմական զարգացման հեռանկարները պատկերացնելու առումով:

Լիագումար և մասնաճյուղային նիստերի մասնակիցները հանդես եկան կոնկրետ փաստերի համակարգմամբ և ընդհանուր հարցադրումներով: ««Արևելյան» և «Հայաստանեայց» Եկեղեցիների առանձնավորության հիմնական դրսևորումները» զեկուցումը Պ. Մ. Մուրադյանը նվիրել էր Քրիստոնյա Արևելքի Եկեղեցիների ազգային, ծիսական, կազմակերպական և կառուցվածքային մի շարք սկզբունքային խնդիրների լուսաբանմանը, որոնց ընկալման հարցում Հայոց Եկեղեցին ցուցաբերել է սկզբունքային մոտեցումներ: Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմական նշանակության պատմա-փիլիսոփայական իմաստավորմանն անդրադարձավ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Սեն Արևշատյանը («Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը»), որն ընդհանուր գծերով բնորոշեց Հայոց քիստոնեական ողջ մշակույթը, նրա փոխհարաբերու-

թյունները հարևան ժողովուրդների ստեղծած արժեքների հետ և կարևորեց Եկեղեցու դերը հայոց մշակույթի կայացման գործում: Լ. Զեքիյանը «Հայ աստվածաբանական մտքի կազմավորման հիմնական փուլերը» աշխատանքում, սկսելով Եզնիկից, իր զեկուցման շարադրանքը հասցրեց մինչև Հակոբ Նալյան, առանձնացրեց Հայոց դավանաբանության զարգացման ութ շրջափուլ: Հեղինակն ի մասնավորի անդրադարձավ Ներսես Շնորհալու (ԺԲ դար) մոտեցումներին և նրա տեսակետները ներկայացրեց իբրև հայ աստվածաբանական մտքի զարգացման բարձրակետ: Շահե արքեպս. Աճեմյանն իր զեկուցման («Հովհաննես Մայրագոմեցին վերագնահատված») մեջ փորձեց ճշտել իրեն հետաքրքրող հեղինակի դերը Հայոց Եկեղեցու դավանաբանության ձևավորման գործում: Գիտաժողովում հավաստվեց, որ հայոց աստվածաբանական մտքի և ծեսի մանրակրկիտ ուսումնասիրությունը վերջին տասնամյակներին, մասնագետների պակասի պատճառով, վրիպել է հայաստանյան գիտական կենտրոնների ուշադրությունից, և հույս հայտնվեց, որ ապագայում առավել մեծ ուշադրություն պետք է դարձվի այդ խնդիրների լուսաբանմանը:

Բյուզանդական կայսրության տարածքում հայերի ներկայության խնդրի ուսումնասիրությունը վաղուց ի վեր գրավել է բյուզանդագետների ուշադրությունը: Այդ հարցերի քննարկմանն էին իրենց զեկուցումները նվիրել Ա. Կարիլեն («Հայերը և Կովկասցիները Ադրիատիկի տարածաշրջանում (Զ-Ը դդ.)»), Ռ. Հաննիկը («Բյուզանդիան և Կովկասյան աշխարհը Ուխտանեսի «Պատմության» մեջ») և Վ. Հարությունովա-Ֆիդանյանը («Կոնտակտային գոտի» հասկացությունը և դրա էությունը»), որոնք իրենց ունկնդիրների առջև փորձեցին համակարգել Բյուզանդական կայսրության ծայրամասերում քրիստոնեական համակեցության սկզբունքները: Այդ խնդիրների ուսումնասիրությամբ հեղինակներն անդրադառնում էին Բյուզանդական կայսրության պատմության մեջ հայերի խաղացած դերին, Հայոց պատմագրության մեջ Բյուզանդիայի և Կովկասի նկատմամբ եղած վերաբերմունքին: Այս հարցերի շրջանակները կարող են ավելի ընդգրկուն դառնալ մեզանում, եթե համալսարանների ուսումնական պրոցեսներում ավելի մեծ տեղ տրվեր Բյուզանդական աշխարհի, նրա գործունեության ծիրում գործածված լեզուների և կայսրության պատմական զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությանը:

Զեկուցումները բազմազան էին Եկեղեցի, պետություն և միջպետական փոխհարաբերություններ մասնաճյուղում: Հայոց Եկեղեցու վաղ շրջանի պատմության խնդիրներին նվիրեցին իրենց զեկուցումները հնագետներ, պատմաբաններ և բանասերներ: Այդ հարցերի քննարկման տեսանկյունից ուշագրավ էին Է. Դանիելյանի («Ս. Թադեոս առաքյալի ավանդության արտացոլումը հայ պատմագրության մեջ»), Ջեյմս Ռասսելի («Առաքելական առասպելաբանություն») զեկուցումները: Եթե առաջին

զեկուցման մեջ հեղինակը շեշտը դրել էր հայկական նյութի լուսաբանման վրա, ապա երկրորդի հեղինակը իր նյութը քաղում էր սողդիերեն գրված մի մանիքեերեն բնագրից, որի հաղորդածը համեմատում էր հայ պատմագրությանը և բանահյուսությանը հայտնի վկայությունների հետ: Հեղինակները նոր փաստերի օգտագործմամբ շեշտեցին, որ Հայոց Եկեղեցու հիմնադրման առաքելական ավանդույթը շատ ավելի հին է, քան այն ընդունվում է մի շարք գիտնականների կողմից: Նրանցից յուրաքանչյուրը նաև յուրովի լուսաբանեց Հայաստանում քրիստոնեության տարածման նախնական փուլի յուրահատկությունները:

Եկեղեցու, պետության և ազգային մտածողության ձևավորման խնդիրները քննարկվեցին Կ. Միրումյանի («Քրիստոնեության ընդունումը Հայաստանում և ազգային-քաղաքական խնդրակարգը») և Կ. Ցուգբաշյանի («Հայ Եկեղեցու քաղաքական դերը Դ–Ե դարերի եզրին») ելույթներում, իսկ Հայաստանում քրիստոնեության ընդունման գաղափարական և քաղաքական մոտիվներին անդրադարձավ Ռ. Մանասերյանը: Հեղինակները տարբեր կտրվածքների վրա ներկայացրեցին պետության և Եկեղեցու փոխհարաբերություններին վերաբերող հարցերը, անդրադարձան ազգային ինքնագիտակցության և միասնական քաղաքականության ձևավորման պրոցեսում Եկեղեցու խաղացած դերին:

Բ. Հարությունյանի («Մեծ Հայքի վարչական բաժանումը քրիստոնեության ընդունման շրջանում»), Վրեժ Վարդանյանի («Տրդատ Մեծի ավանդը Հայոց Եկեղեցու նվիրապետական համակարգի ձևավորման գործում») և Պ. Հակոբյանի («Հայոց Եկեղեցու նվիրապետական կառույցը Գրիգոր Լուսավորչի օրերին») զեկուցումները նվիրված էին Դ դարի վարչատարածքային և Հայոց Եկեղեցու նվիրապետության համակարգի ստեղծման խնդիրներին, որոնց գիտական ուսումնասիրությունը միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրության տեսանկյունից ունի խիստ արդիական նշանակություն: Հարցերի այս շրջանակում ցանկալի կլիներ նաև այնպիսի զեկուցումների ընթերցումը, որոնք վերաբերեին Տիեզերական Եկեղեցու նվիրապետական համակարգի և առանձին քույր Եկեղեցիների բաժանման ու համանման զուգահեռ կառույցների ստեղծման խնդիրներին, ճշտվեր պատրիարքական Աթոռների դերը Քրիստոնեա Արևելքի ժողովուրդների ճակատագրում:

Ժամանակագրության հարցերը Մովսես Խորենացուց սկսած եղել են հայոց պատմագրության ուշադրության կենտրոնում: Ճշգրիտ թվականների օգտագործման և շրջանառության մեջ դնելու միջոցով է հնարավոր դառնում միայն Հայոց պատմության ողջ ընթացքը բացատրելի դարձնել համաշխարհային իրադարձությունների հորձանուտում: Վաղ շրջանի պատմագրության ժամանակագրական խնդիրների վերլուծությանն էին նվիրել իրենց զեկուցումները Ա. Մարտիրոսյանը («Հայոց դարձի թվականը»), Ն. Գարսոյանը («491 թ. արդյո՞ք եղել է Վաղարշապատի

ժողով»), Ա. Հակոբյանը («Զվարթնոցի տաճարի օծման թվականը»): Ելույթ ունեցողները, օգտագործելով հայտնի սկզբնաղբյուրները, դրանք փորձում էին դիտել իրենց հետաքրքրող դարաշրջանի պատմական ետնախորքի վրա և ըստ այդմ էլ թվագրում էին ուսումնասիրության նյութ դարձած իրադարձությունները, դրանց տեղի ունենալու հնարավոր վարկածների քննությամբ:

Պեղումների ժամանակ հայտնաբերված վաղ քրիստոնեության շրջանի պաշտամունքային կենտրոնների հնագիտական ուսումնասիրության հարցերին էին նվիրված Ն. Հակոբյանի և Ա. Քալանթարյանի («Կաթողիկոսանիստ Դվինը»), Ֆ. Տեր-Մարտիրոսովի («Հայաստանը քրիստոնեացման նախօրեին (ըստ հնագիտական նյութի)»), Հ. Սիմոնյանի («Վաղագույն քրիստոնեական պաշտամունքային համալիր Արցախում») զեկուցումները: Քննարկումների ժամանակ պարզվեց, որ վերջին տարիներին հնագիտական հետազոտությունները չունեն ծրագրավորված բնույթ: Պեղումների համար հատկացումներ չեն արվում, այն դեպքում, երբ Հայաստանի միջնադարյան մշակույթի կենտրոնների ուսումնասիրությունը կարող է արժեքավոր նյութեր տրամադրել Հայաստանի մշակույթի պատմության հետազոտողներին:

Ընթերցված զեկուցումների մեջ իրենց տեղն ունեին Խաչակրաց ռազմարշավների ժամանակաշրջանի Մերձավոր Արևելքի եկեղեցական և քաղաքական պատմության ուսումնասիրության խնդիրները: Այդ ժամանակաշրջանի իրադարձությունների մի շարք կոնկրետ դրսևորումների մասնագիտական քննությանն էին նվիրել իրենց հետազոտությունները Ժ. Ռիշարը («Հայերը Լատին արևելքի պետություններում»), Պ. Հալֆտերը («Կիլիկիայի Հայկական Թագավորության նկարագրությունը Հիլդեսհայմի վանական Վիլբրանդ Օլդենբուրգցու կողմից»), Ա. Բոզոյանը («Անտիոքի պատրիարքական Աթոռը և ԺԲ դարի Քրիստոնյա Արևելքի եկեղեցական հարաբերությունները») և Վ. Գևորգյանը («Համաքրիստոնեական եկեղեցական միասնության հարցը խաչակրաց շարժման մեջ»): Զեկուցողներն ունկնդիրների ուշադրությունը հրավիրեցին Արևելքում խաչակրաց շարժման ծավալման հիմնական օրինաչափությունների վրա, բացահայտեցին կիլիկյան Հայաստանի, հայ բնակչության և Հայոց Եկեղեցու դերը այդ պրոցեսներում: Գիտաժողովի թեմատիկ շրջանակներից դուրս չէին մնացել նաև նույն դարաշրջանի Հյուսիսային Հայաստանի պատմության խնդիրները: ԺԲ-ԺԳ դարերի վրացական պետության պատմության մեջ Հայոց Եկեղեցու և նրա հետևորդների ստանձնած դերին անդրադարձավ Հ. Մարգարյանը («Զաքարյանների դավանական կողմնորոշումը և էթնոմշակութային դիմապատկերը»):

Ե - Զ դարերի հայ պատմագրության մի շարք սկզբունքային նշանակություն ունեցող հուշարձանների ուսումնասիրության խնդիրներին էին նվիրել իրենց զեկուցումները Ջ. Բոլոնիեզին («Եվսեբիոս Կեսարացու

«Քրոնիկոնի» հին հայերեն թարգմանության շուրջ»), Ա. Մուշեղյանը («Ագաթանգեղոսի Պատմությունը՝ հայ պատմագրության երախայրիք») ու Ջ. Տրդինան («Փավստոսը, Պրոկոպիոսը և «Հայոց պատմությունը»), որոնք փորձեցին ունկնդիրների ուշադրությունը հրավիրել հայ պատմագրության սկզբնավորման փուլի մի շարք խնդիրների վրա: Եթե հիշատակված զեկուցումներից առաջինը նվիրված էր հայերեն թարգմանված առաջին պատմագրական երկերից մեկի՝ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» բանասիրական քննությանը, ուր հեղինակը ցույց էր տալիս հայերեն պահպանված բնագրի բացառիկ նշանակությունը հունարեն տեքստի վերականգնման խնդրում, ապա հաջորդ երկու զեկուցումները նվիրված էին Հայոց պատմական ավանդույթի ինքնատիպության խնդիրներին, փորձ էին անում վեր հանել Հայոց պատմագրության կապերը բյուզանդական ավանդույթի դրսևորումների հետ:

Վաղ շրջանի հայ թարգմանական գրականության ուսումնասիրության պատմաբանասիրական առանձին խնդիրներ քննարկեցին Ա. Ղազինյանը («Սողոմոնի առակներից մեկի մաշտոցյան թարգմանությունը»), Գ. Ուլուհոջյանը («Եղիշեի «Բան խրատու յաղագս միանձանց» երկը և նրա առնչությունը հարևան մատենագրության հետ»), Բ. Քուլին («Գրիգոր Նազիանզացի Աստվածաբանի երկերի հայկական տարբերակը»), Հ. Սիմոնյանը («Թարգմանական գեղարվեստական երկերի քրիստոնեացման համակարգը միջնադարյան Հայաստանում»), Վ. Կալցոլարին («Ս. Թեկղի լեգենդը Հայաստանում»): Բնագրագիտական նոր փաստարկներով Եղիշե-Մանդակունի առնչությունների հարցին անդրադարձավ Լ. Տեր-Ստեփանյանը: Հայոց թարգմանական մատենագրության հարցերի լուսաբանումը և դեռևս չհրապարակված բազմաթիվ բնագրերի առկայությունը պարտավորեցնում է ավելի ու ավելի մեծ ուշադրություն դարձնել այս բնագավառում քննարկված խնդիրներին:

Արևելաքրիստոնեական աշխարհի սրբախոսության և հակաճառական գրականության մի շարք բնորոշ առանձնահատկությունների ուսումնասիրությունն էին իրենց ելույթի նյութ դարձրել Մ. Ռափավան («Հայոց Եկեղեցու ծիսակարգին վերաբերող հակաճառությունները Արսեն Իղալթոյելու «Դոգմատիկոնում») և Օ. Վարդազարյանը («Փիլոն-քրիստոնյա» առասպելը հայ մատենագրության մեջ»), իսկ Ա. Մուրավյովը իր զեկուցումը նվիրեց Բարսեղ Կեսարացու Վարքի այլալեզու խմբագրությունների բնագրագիտական քննարկմանը: Սպասելի էր, որ ժամանակակից դասական բանասիրության խնդիրների լուսաբանմանը կմասնակցեն ավելի մեծ թվով մասնագետներ, որոնք անդրադառնային միջնադարում այլ լեզուներից և տարբեր ժամանակներում հայերեն թարգմանված երկերի ոճական առանձնահատկություններին, հրապարակ բերեին նոր երկեր, անդրադառնային թարգմանիչների կիրառած սկզբունքներին: Ցավով պետք է նշել, որ վերջին տարիներին այս խնդիրների ուսումնա-

սիրության բնագավառում Հայաստանում չենք պատրաստել բանասեր-ասորագետ, մասնագետներ չունենք նաև դպտիագիտության և եթովպագիտության բնագավառներում:

Ապոկրիֆ գրականության ուսումնասիրության տարբեր խնդիրներ իրենց ելույթներում շոշափեցին Մ. Վան Էսբրուկը և Ք. Տեր-Դավթյան-Արևշատյանը: Առաջինն իր զեկուցման մեջ («Կելստինոս Պապի պարականոն երկխոսությունը Բարսումայի հետ») անդրադարձավ Հակոբ Անապյանի կողմից «Հանդէս Ամսօրեայ»-ում հրապարակված (1983 թ.) իրեն հետաքրքրող երկի գրության հանգամանքներին, հիշատակված անձնավորությունների ինքնությանը և մատենագրական այդ կոթողը թվագրեց Սահակ Ջորափորեցի Կաթողիկոսի գահակալման ժամանակով, իսկ Ք. Տեր-Դավթյան-Արևշատյանը («Քրիստոսի «Մանկության Ավետարանների» արտացոլքը հայ միջնադարյան զրույցներում») իր զեկուցման մեջ ունկնդիրների ուշադրությունը հրավիրեց հայերենով չավանդված պարականոն Ավետարանի (Թովմայի Ավետարան) և հայ բանահյուսություն թափանցած մի շարք բանավոր պատումների վրա:

Միջնադարյան հասարակության ուսումնասիրության խնդիրների մեջ կարևոր տեղ ունեն իրավունքի հարցերի քննությունը: Այս բնագավառը վերջին տարիներին մեզանում բարձիթողի է արված: Այս բնագավառում արծարծվող հարցերի մի խմբի քննարկմանն անդրադարձավ Ռ. Թոմսոնը («Կանոնական և քաղաքացիական իրավունքը Մխիթար Գոշի երկում»): Հեղինակը, որը վերջին տարիներին զբաղվում է Գոշի Դատաստանագրքի անգլերեն թարգմանությամբ, իր զեկուցումը նվիրել էր Հայոց միջնադարյան իրավունքում աշխարհիկ և հոգևոր սկզբունքների հարաբերակցության խնդրին: Ցանկալի կլիներ հաջորդ նմանատիպ գիտաժողովներում զեկուցումներ լսել նաև Բյուզանդիայի և Քրիստոնյա Արևելքի մյուս ժողովուրդների իրավունքի հուշարձանների վերաբերյալ, որոնք մեր պատկերացումները կընդլայնեին այդ հասարակություններում ապրող ժողովուրդների իրավական ըմբռնումների մասին:

Հայոց մշակույթի մի շարք հատկանշական սիմվոլների քննարկմանն անդրադարձան Գ. Պըլտյանը («Բնիկն ու օտարը Ե դարու մատենագրութեան մէջ»), Հ. Հովհաննիսյանը («Լուսավորչի վկայաբանության սիմվոլները») և Ս. Գրիգորյանը («Հայերն իբրև քրիստոնեության ավանդապահ ժառանգորդ»): Եթե Գ. Պըլտյանը փորձեց Ե դարի հուշարձանների վրա հենվելով վերականգնել յուրայինին ու օտարին շրջապատող իմաստային դաշտը, ապա մյուս զեկուցողները անդրադարձան Հայոց քրիստոնեական մշակույթին բնորոշ իմաստային և բառական մի շարք խորհրդանիշերի բնութագրմանը:

Առաջին հայացքից իրար հակամետ բյուզանդական և պարսկական մշակույթների ու հայոց գրականության մի շարք փոխառնչությունների վրա էին իրենց զեկուցումները կառուցել Ա. Օրսելին («Սրբախոսական

կաղապարը Բյուզանդիայում և Կովկասում») և Ա. Կոզմոյանը («Քրիստոնեական և իսլամական միստիցիզմի արտացոլումը քնարերգության մեջ (Նարեկացի-Ռումի)»): Ա. Օրսելին, հենվելով հիմնականում Փավստոս Բուզանդի իտալերեն թարգմանության վրա, գրական մտածողության զուգահեռներ էր փնտրում Բյուզանդական աշխարհում, իսկ Ա. Կոզմոյանը մտածողության նույնություններ էր որոնում քրիստոնյա և իսլամ միստիկների տարաբնույթ հասարակություններում: Հ. Մկրտչյանը իր զեկուցումը նվիրել էր հայերի և արաբախոս մելքիտների մատենագրական և մշակութային կապերին, բնագավառ, որի հետազոտությունը խոստումնալից կարող է լինել հայագիտության մի շարք ճյուղերի տեսանկյունից:

Բնագրերի կազմման աշխատանքների քննարկմանն անդրադարձան Ա. Ջեյթունյանը («Աստվածաշնչական գրքերի քննական բնագրերի հրատարակության մի քանի սկզբունքների մասին») և Ս. Զամուդյանը («Ներսես Լամբրոնացիի «Մեկնութիւն Սաղմոսաց»-ի ձեռագրերը»): Վերջին տարիներին Փարիզի աճուրդներում հայտնված մատյանների ներկայացմանն էր իր ելույթը նվիրել Բ. Ուտիեն («Անծանոթ հիշատակարանների նոր տեղեկությունները»): Ձեռագրագիտությանը և բնագրագիտությանը հուզող հարցերի, հատկապես Աստվածաշնչի հայերեն բնագրի հրատարակության խնդիրների շուրջ օգտակար զրույց ծավալվեց քննարկումների ժամանակ:

Պ. Չոբանյանը («Անաստաս Հերապոլսեցու «Վասն վանորէից, որ յԵրուսաղէմ» երկը և նրա պատմական նշանակությունը») և Զ. Ալեքսիձեն («Սինայի Լեռան նոր հավաքածոն և նրա նշանակությունը քրիստոնյա Կովկասի պատմության համար») իրենց ելույթները նվիրել էին Կովկասի եկեղեցիների և հնագույն քրիստոնեական սրբավայր Երուսաղեմի միջև եղած կապերի ուսումնասիրության խնդիրներին՝ կարևորելով Հայոց, Վրաց և Աղվանից մշակույթների դերը միջնադարյան Արևելքի մշակութային գանձարանում: Հատկապես տպավորիչ էր Սինայում հայտնաբերված աղվաներեն ձեռագրի հայտնաբերման փաստը, որը նոր հեռանկարներ է բաց անում քրիստոնյա աղվանական մշակույթի ուսումնասիրության համար:

Գիտաժողովի ընթացքում ուշագրավ զեկուցումներ ընթերցվեցին հայոց քրիստոնեական ճարտարապետության ուսումնասիրության խնդիրների վերաբերյալ: Հայոց ճարտարապետության հետազոտության ընդհանուր խնդիրներին անդրադարձավ Վ. Հարությունյանը: Քննարկվեցին տարբեր տարածաշրջաններում ճարտարապետական ձևերի զարգացման օրինաչափություններն ու ազդեցության խնդիրները: Կ. Բոնարդին («Նախադռնից նախասրահ, ապա՝ գավիթ. Բյուզանդիայի միջնորդությամբ ճարտարպետական ձևերի անցումը Կովկասից դեպի միջնադարյան Արևմուտք»), Ա. Ղազարյանը («Հայաստանի և Փոքր Ասիայի հարավ-արևելյան գավառների վաղքրիստոնեական ճարտարա-

պետությունը»), Մ. Հասրաթյանը («Հայաստանի և հարևան քրիստոնյա երկրների ճարտարապետական առնչությունները վաղ միջնադարում») և Մ. Ա. Լ. Կոմենոն («Հայաստանը և Կենտրոնական Ասիան») իրենց զեկուցումներում կոնկրետ նյութի վրա կարողացան ցույց տալ հայոց և տարածաշրջանի հարևան ժողովուրդների ճարտարապետական հուշարձանների զարգացման մի շարք բնորոշ օրինաչափություններ:

Հայ միջնադարյան մանրանկարչության ուսումնասիրության այսօրվա խնդիրներին անդրադարձան Ի. Դրամփյանը («Թորոս Ռոսլինի գեղարվեստական մտածողության և վերջինիս ակունքների մասին»), Է. Կորխմազյանը («Սուրբ Սարգսի պաշտամունքը Հայաստանում և նրա պատկերումը արվեստում»), Տ. Կույումճյանը («Ալեքսանդր Մեծի Պատմության նկարազարդ ձեռագրերի պատկերագրության քրիստոնեական տարրերը»), Վ. Ղազարյանը («Մեկնությունների արտացոլումը խորանների պատկերներում») և Ա. Մաթևոսյանը («Հեթում թագավորի Ճաշոցը»), իսկ եկեղեցական պատկերագրության հարցերին անդրադարձավ Ա. Լիդովը («Հայ-քաղկեդոնականների արվեստը արևելաքրիստոնեական մշակույթում»):

Երաժշտության պատմության խնդիրները ևս իրենց ուրույն տեղն ունեին գիտաժողովում քննարկված հարցերի մեջ: Ա. Արևշատյանի («Հայ միջնադարյան «Ջայնից մեկնությունները» և Մովսես Սյունեցու «Ցաղագս կարգաց Եկեղեցւոյ» գրվածքը»), Լ. Երնջակյանի («Հայ հոգևոր մոնոդիաների և արևելյան դասական մեղեդիների փոխառնչությունները»), Ա. Վարդումյանի («Հայոց եկեղեցական երգեցողության ուշ միջնադարյան Կոստանդնուպոլսի դպրոցը») զեկուցումները նվիրված էին հայ միջնադարյան երաժշտական արվեստի տարբեր դրսևորումներին:

Հ. Մաեդան կարողացավ ունկնդիրներին համապարփակ պատկերացում տալ միջնադարյան Մերձավոր Արևելքի խնդիրներով զբաղվող այսօրվա ճապոնական արևելագիտությանը հուզող խնդիրների մասին, որոնք սերտորեն առնչվում են տարածաշրջանի քրիստոնյա ժողովուրդների պատմությանը: Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի կապակցությամբ 1999 թ. Վատիկանում կազմակերպվելիք ցուցահանդեսի նմուշների ներկայացման և անելիքների շուրջ լուրջ խոսակցություն ծավալեց Կ. Մութաֆյանը իր «Հռոմ-Հայաստան. Հայաստանի 2000-ամյա կապերը Հռոմեական կայսրության ու իտալական քաղաքների հետ» ակնարկում, որը ուղեկցվում էր ցուցանմուշների լուսանկարների ցուցադրումով:

Ինչպես տեսնում ենք, գիտաժողովում արծարծված հարցերը շոշափում էին հայ միջնադարագիտությանը հետաքրքրող գրեթե բոլոր բնագավառները: Գիտաժողովի կազմակերպիչներն ու մասնակիցները հույս հայտնեցին, որ ընթերցված զեկուցումները մինչև այս տարվա վերջը կհավաքվեն և կհրապարակվեն առանձին ժողովածուով: